ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 հունիսի 2026 թվականի N 856 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2022 ԹՎԱ-ԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 28-Ի N 1180-Ն, N 1177-Ն ԵՎ N 1161-Ն ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ, 34-րդ հոդվածներով, «Անձի ֆունկցիոնալության գնահատման մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 2026 թվականի փետրվարի 13-ի ՀՕ-49-Ն օրենքի 1-ին, 2-րդ և 5-րդ հոդվածներով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի հուլիսի 28-ի «Անձի ֆունկցիոնալության գնահատման կարգը հաստատելու մասին» N 1180-Ն որոշման (այսուհետ՝ որոշում 1) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝

1) որոշում 1-ի հավելվածի 2-րդ կետում «որոշելու և» բառերը փոխարինել «որոշելու և (կամ)» բառերով.

2) որոշում 1-ի հավելվածի 14-րդ կետի 3-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3) բժշկասոցիալական փորձաքննության արդյունքում անժամկետ հաշմանդամություն ունեցող անձանց կողմից իրենց ցանկությամբ դիմելու դեպքում, այդ թվում՝ ծառայությունների անհատական ծրագիր ստանալու համար։».

3) որոշում 1-ի հավելվածի 14-րդ կետի 4-րդ ենթակետը ճանաչել ուժը կորցրած.

4) որոշում 1-ի հավելվածի 15-րդ կետի 2-րդ ենթակետից հանել «ամբողջությամբ կամ մասամբ» բառերը.

5) որոշում 1-ի հավելվածը 15-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 15.1-ին, 15.2-րդ, 15.3-րդ, 15.4-րդ և 15.5-րդ կետերով.

«15.1. Սույն կարգի 15-րդ կետի 2-րդ և 3-րդ ենթակետերով սահմանված՝ ծառայությունների անհատական ծրագրում փոփոխություն (լրացում) կատարելու կամ դրանում ներառված միջոցառումների վերանայման դեպքերում ծառայությունների անհատական ծրագրում փոփոխություն (լրացում) կատարվում է՝ հիմք ընդունելով գործող ֆունկցիոնալության գնահատման արդյունքները և ներկայացված փաստաթղթերը (ֆունկցիոնալության սահմանափակման աստիճանը չի վերանայվում):

15.2. Ծառայությունների անհատական ծրագրում փոփոխություններ (լրացումներ) կատարելու վերաբերյալ դիմումը սույն կարգի 30-րդ կետով սահմանված կարգով մուտքագրելիս անձը կցում է նաև փոփոխության համար հիմք հանդիսացող փաստաթուղթը: Դիմումը մուտքագրվելուց հետո դիմումին ընթացք է տրվում սույն կարգի 33-րդ, 35-րդ և 37-րդ կետերով սահմանված կարգով:

15.3. Ծառայությունների անհատական ծրագրում փոփոխություն (լրացում) կատարելու դեպքում ձևավորվում է ծառայությունների անհատական նոր ծրագիր, որում ներառվում են նաև նախկին ծրագրում սահմանված բոլոր ծառայությունները: Այս դեպքում, գործում է ծառայությունների անհատական նոր ծրագիրը, իսկ նախորդը համարվում է անվավեր:

15.4. Ծառայությունների անհատական ծրագրում փոփոխություն (լրացում) չի կատարվում, եթե՝

1) բացակայում է դիմումում նշված ծառայությունը ցուցելու իրավական հիմքը.

2) գնահատող հանձնաժողովը չի ցուցում տվյալ ծառայությունը՝ ելնելով գնահատման արդյունքներից.

3) անձի ֆունկիոնալության գնահատման որոշման ժամկետը լրանում է դիմելուն հաջորդող ամսին:

15.5. Դիմողը գնահատող հանձնաժողովի որոշման մասին տեղեկացվում է որոշման ընդունումից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում՝ էլեկտրոնային համակարգի միջոցով:»:

2. Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի հուլիսի 28-ի «Անձի ֆունկցիոնալության գնահատման չափորոշիչները և գործիքները հաստատելու մասին» N 1177-Ն որոշման (այսուհետ՝ որոշում 2) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշում 2-ի հավելվածի աղյուսակ 2-ը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

« **xxx.0**	խնդիր չունի, սահմանափակում չկա (առկա չէ, բացակայում է, նկատելի չէ).	0-4%
xxx.1	թեթև աստիճանի խնդիր (աննշան, թույլ խանգարում և (կամ) սահմանափակում).	5-24%
xxx.2	միջին աստիճանի խնդիր (չափավոր, նշանակալի խանգարում և (կամ) սահմանափակում).	25-49%
xxx.3	ծանր աստիճանի խնդիր (արտահայտված խանգարում և (կամ) սահմանափակում).	50-95%
xxx.4	խորն աստիճանի խնդիր (խիստ արտահայտված, լիակատար խանգարում և (կամ) սահմանափակում):	96-100%».

2) որոշում 2-ի հավելվածի 16-րդ և 18-րդ կետերում «երաշխավորվում» բառը փոխարինել «ցուցվում» բառով, իսկ 17-րդ և 19-րդ կետերում «և ըստ ֆունկցիոնալության գնահատման չափանիշների և գործիքների երաշխավորվում» բառերը փոխարինել «ըստ կարիքի ցուցվում» բառերով:

3. Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի հուլիսի 28-ի «Ծառայությունների անհատական ծրագրերը կազմելու և իրականացնելու կարգը հաստատելու մասին» N 1161-Ն որոշման հավելվածի 6-րդ կետում «երաշխավորությունները» բառը փոխարինել «ցուցումները» բառով, իսկ 18-րդ կետում «երաշխավորված» բառը փոխարինել «ցուցված» բառով:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

18.06.2026
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ